

ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ

12րդ դար

9.

ԵՐԱԺՇՏԱԳԻՏ ԵՌԱՀԱՆՆԷՍ

12րդ դարում հայ երաժշտությունն անուամբ է առելի նշանակալից ձևակերպումներ և նուաճումներ: Դարաշրջանի հայաբնակները կազմում են լուսավորչական երաժշտական ներսէս Ծնորհայր, ներսէս Լամբրոսյան, Խաչատուր Տարսնեցի, որոնք իրենց ստեղծագործություններով հարստացրել են հայ երաժշտության գանձարանը: Ահա 12րդ դարի երկրորդ շրջանի հայ երաժշտական մշակույթի նշանաւոր դէմքերից մէկն է վաստակաւոր արուեստագէտ Յովհաննէս վանականը, որ իր գեղարուեստական գործունէութեամբ հայ եկեղեցական երաժշտութեան պատմութեան մէջ պատուաւոր տեղ է զբաղեցնում:

Նա պատկանում է միջնադարեան հայ առաջնակարգ աշխարհարուեստի շարքին, որը ոչ միայն մշակել, զարգացրել և խորացրել է իր հոգում թագնուած երաժշտական գեղեցիկ ձիրքը, այլև ամբողջապէս համակուել է հայ հոգեւոր երգերի հոգեպարար թովչանքով և իր վանականի պարտականութիւններին զուգընթաց՝ երկար տարիների անխոնջ աշխատանքով, արտակարգ ոգևորութեամբ և առանձին սիրով ուսումնասիրել է հայ եկեղեցական բաղամղարեան երաժշտութեան թանկագին աւանդներն ու նրանց գեղեցկութիւնները, որոնք մի նոր աշխարհ են բացել նրա արուեստի առջև:

Ուշագրաւ է և այն, որ այդ ուղղութեան նա մինչև իր կեանքի վերջը հաւատարիմ է մնացել և իր ինքնատիպ արուեստով դարձել է իր ապրած դարաշրջանի հայ եկեղեցական երաժշտութեան պայծառ դէմքերից մէկը:

Իր երաժշտական փայլուն ընդունա-

կութիւններն էլ նրան դարձրել են 12րդ դարի հայ հոգեւոր երաժշտութեան «անյաղթ յերաժշտականը», «հայկական եկեղեցական երաժշտութեան հպարտութիւնը» (*): Առհասարակ, արուեստագէտի մեծութիւնը նրա երաժշտագիտական հմտութիւնն է, ստեղծագործական վարպետութիւնը: Նա ձայնագրել և հայ երաժշտութեան ու ապագայ սերունդներին աւանդ է թողել հոգեւոր երգեր ու մեղեդիներ, որոնցով դարձել է տուել դարաշրջանի եկեղեցական երաժշտութեան զարգացմանը:

Ընդգծենք և այն, որ երաժշտագէտը, բացի երաժշտական տաղանդից, ունեցել է նաև գեղագրական արուեստի ձիրք: Իր վանական կեանքի շրջանում նա նուիրուել է նաև գրչական մշակույթի վեհ գործին:

Հայ երաժշտական արուեստի այս վարպետի յայտնութեան համար պարտական ենք ներսէս Ծնորհայրու «կաթողիկեայ թղթերի մեկնութիւն» խորագրով ձեռագիր մատենի յիշատակարանին: Դա միջնադարեան հայ երաժշտութեան պատմութեան կարևոր մի մութ էջը լուսարանող մի թանկագին աղբյւր է, ուր երաժշտագէտի մասին կարդում ենք այսպիսի ուշագրաւ տուրքեր. «... Եւ զիս գտառագիտալս Յակովբ՝ զսակաւ աշխատողս և զամենաբարի զհարագասն իմ զՅովհաննէս, զընտիրն ի բեմբականս, և զանյաղթն յերաժշտականս և զանձանձրոյթն ի գրչութեան անհոնջ, զգովելին յամենայն բարեձևութիւն ... և զբեցաւ ի ՈՅԷ (647 + 551 = 1198) թուիս լուսերանդ և հրաշապատում տառս առաքելագիծ մատենիս բաղմագան բարութեամբ և իմաստութեամբ լցեալ»:

Հայ երաժշտութեան պատմութեան համար առանձին նշանակութիւն ունեցող այս արժէքաւոր վաւերագրի ամբողջական պատկերը գտնուում է Վենետիկի - Ս. Ղազարի Մխիթարեան Մխարանութեան Մատենադարանում: Այդ թանկագին աղբյւրից որոշ հատուածներ տեսնում ենք նաև Հ. Դեռնդ Ալիշանի «Սխուտանում», «Հայապատում»-ի մէջ, Զարբհանէլեանի «Հայկական Հին

(*) Էլ կանգ չենք առնում 10րդ դարի մեծաւոր տաղանդ բանաստեղծ և նարեկայ վանքի վանական Գրիգոր Նարեկացու վրայ, որ անմահացալ իր հիասքանչ «Նարեկչով» Ունի նաև բաղմաթիւ տաղեր, գանձեր և շարականներ:

Դպրութեան Պատմութիւն» երկում, Հ. Միքայէլ Զամչեանի «Պատմութիւն Հայոց» գրքում և Դարեգին Ա. Կաթողիկոսի «Յիշատակարանք Զեռագրաց» հատորում: Այս փաստական ցայտուն աղբիւրներն էլ վկայում են, որ երաժշտագետ Յովհաննէսն իր դարաշրջանում յարգուել է իր «ամենաբարի», ազնիւ բնաւորութեամբ: Այդ էական առաքինութեան վրայ աւելացնենք նաև նրա «բեմական ընտիր» ձիրքը, «գովելի յամենայն բարեձեռութիւնը», յատկանիշեր, որոնց չնորհիւ նա սիրուել է ու յարգուել վանքի միաբաններէից, սիրուել է ժամանակի արուեստագէտներէից, մտաւարականներէից և հասարակութիւնից:

Սակայն, նա 12-րդ դարում առանձնապէս հռչակուել է, ինչպէս նշեցինք, իր երաժշտական վարպետութեամբ, հոգեւոր երաժշտութեան արուեստի գծով կատարած նուաճումներով, որոնցով նա իր ապրած դարաշրջանի հայ ժողովրդի հոգում վառ է պահել եկեղեցական երաժշտական արուեստի սէրը: Այս երևոյթներն էլ հաստատում են մի կարեւոր հանգամանք, որ արուեստագէտ Յովհաննէս վանականի կեանքի պատմութիւնը և հոգեւոր երաժշտութեան զարգացման գծով նրա կատարած գերը 12-րդ դարի երկրորդ շրջանի գեղարուեստական շարժման ուղագրաւ և արժէքաւոր էջերից մէկն է, մի վաստակաւոր ջանակիր, որի պայծառ յիշատակը հայ երաժշտասէրների սրտերում այսօր վառ է պահում Ս. Ղազարի մենաստանի Մատենադարանում հանգչող 1198 թուին գրուած թանկագին ձեռագրի յիշատակարանը:

Պարզ է և այն, որ «անյաղթն յերաժըտականքը միջնադարեան հայ երաժըտական մշակոյթի ականաւոր վաստակաւորներէի շարքում ունի իր առանձնայատուկ և ուրոյն էջը:

10

ԵՐԱՇՏԱԳԷՏ

ԽԱՉԱՏՈՒՐ ՎՐԴ. ՏԱՐՈՆԵՑԻ

13րդ դարի քաղաքական անցքերը՝ թաթարական արշաւանքները և հայ ժողովրդի թշուառութիւններն արձանագրող Կիրակոս Գանձակեցուն պարտական ենք, որ իր ժամանակին նկարել է մի խոշոր

արուեստագէտի կերպարը: Դա Խաչատուր Վրդ. Տարօնեցին է:

12րդ դարի առաջագէտ, լուսաւոր և նշանաւոր այս հոգեւորականը պատմաշրջանի իր վեհ կոչման բարձրութեան վրայ կանգնած այն պայծառ դէմքերից մէկն է, որ անսայթաք քայլի է պարտականութեան գիտակցութեան և անասման նուիրածութեան ճանապարհով: Նա իր ամբողջ էութեամբ նուիրուել է հայ եկեղեցու պայծառութեան և բարեգործութեան վեհ գործին: Սակայն, մի այլ բնորոշ և գեղեցիկ յատկանիշ էլ աւելի բարձրացնում է նրա հասարակական կերպարը: Դա նրա երաժըտական խոշոր ձիրքն է: Օժտուած լինելով արուեստի փայլուն տաղանդով, Տարօնեցին զբաղուել է կրօնական երգերի եղանակներով և իրեն նուիրել է իր ապրած դարաշրջանի հոգեւոր երաժշտութեան վերածնութեան գործին:

Նրան զբաղեցրել է և յուզել մի կարեւոր և հրատապ խնդիր — եղանակները ձայնագրելու, աղաւաղումից ազատելու և անհետ կորստից վերկելու համար գտնել գործնական մի միջոց: Այդ վեհ նպատակի իրագործման համար նա ընտրել է խաղերի սխառութիւն: Ահա թէ ինչո՞ւ նրա անունը սերտ կերպով կապուած է հայկական հին խաղերի շահեկան և հետաքրքիր նոտագրութեան վերջնական կազմակերպման հետ: Այս մասին Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» արժէքաւոր գրքի 119րդ էջում կարդում ենք. «Էր ի տօնախմբութիւն սուրբ եկեղեցւոյն Գիտակայ, և սուրբ վարդապետն Խաչատուր Տարօնացի առաջնորդ սուրբ ուխտին, որ կոչի Հաղարծին, այր սուրբ և առաքինի և գիտութեամբ հռչակեալ, մանաւանդ երաժշտական արուեստի: Սա պայծառացոյց զսուրբ ուխտն (Հաղարծին վանքը)՝ որում առաջնորդ էր ինքն, որ յառաջ քան զգալն նորա՝ ամայի էր և խամբացեալ: Զսա պատուէր մեծապէս թագաւորն վրաց Գիօրգի, հայ Թամարին: Եւ եկեղեցւոյն ձեռնադրովն իւրով ետ գերկուս գիւղան, զԱբասաձոր և զՏանձուտն, և այգի մի ի Միջնաշինին ... Սա երեք զխաղն ի կողմանս յարեւելից, զանմարմին եղանակն ի մարմին ածել, զարարեալսն յիմաստնոց, որ զայն ժամանակս չէր սփռեալ ընդ աշխարհս: Սա

եկեալ գրեաց և ուսոյց՝ բազմացաւ։ Այս փաստական տողերն էլ ընդգծում են ամենից առաջ այն, որ նա իր դարաշրջանում հոգակուել է ոչ միայն իր զիտութեամբ, այլև իր երաժշտական գեղեցիկ յատկանիշներով։ Նոյնպէս նրա առաջնորդութեան ժամանակ Հաղարծինի պատմական վանքը պայծառացել և նոր փայլ ու բովանդակութիւն է ստացել։

Մի հանգամանք անժխտելի է, որ միջնադարեան հայ եկեղեցական երաժշտութեան մէջ ոչ մի երաժշտագէտ այնքան մեծ հեղինակութիւն և համբաւ չի վայելել, որքան Տարօնեցին։ Նա 12րդ դարի ոչ միայն զիտական և լուսագոյն հոգևորականներէն մէկն է, այլև իր ժամանակի տաղանդաւոր երգահանն է, որ յայտնաբերել է ու գործադրել հայ երաժշտական խաղերը՝ նշանագրերը, և զրել է այն ամուր պատուանդանը, որի վրայ հետագայում կառուցուել և զարգացել է հայ եկեղեցական երաժշտութիւնը։ Նրա այդ զերը հայ երաժշտութեան պատմութեան ամենագեղեցիկ մի էջն է կազմում։

Տարօնեցին առաջին արուեստագէտն է, որ 12րդ դարում ձայնագրել, խաղա, լսել և զրել է առել շարականները հոգեւոր երգեր և աւանդ է թողել ապագայ սերունդներին։

Իր ստեղծագործութիւնների մէջ նա երևան է գալիս իր ինքնատիպ արուեստով և նորանոր որոնումներով, հանդէս է գալիս որպէս վարպետ և գեղարուեստագէտ-երաժիշտ, որ փայլել է իր ուրոյն երաժշտութեամբ և առանձնայատուկ ոճով, բազմերանգ ութմով և գեղարուեստական բարձր մշակոյթով։ Իր «Երաժշտական արուեստով» նա ժամանակակիցների մէջ մեծ հոգակ է վայելել։

Նոյնպէս նա իր դարաշրջանում յայտնի է դարձել որպէս վաստակաւոր մանկավարժ, նա ոչ միայն խաղերը բերել է «Ի կողմանս յարեւելից», այլև երաժշտական նշանագրերը շատերին սովորեցրել է և նրանց հոգիներում վառ պահել երաժշտական արուեստի սէրը։

Հայ եկեղեցական երաժշտութեան մէջ Տարօնեցու ինքնատիպ արտայայտութիւններն ունենալով նրա ստեղծագործական անմիջականութիւնն է ու խորութիւնը։ Նրա երգերը, միջնադարեան հոգեւոր երաժշտութեան համար, իբր նոր երեւոյթ, անպայման նշանակալից են և ուշադրութեան

ԵԿԵՂԵՅԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ

ՅԱԿՈԲ ԶՈՒՂԱՅԵՅԻ

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

Աւետիքի 1955 Հոկտեմբեր-Դեկտեմբերի միացեալ թիւին մէջ, զոր վերջերս ստացանք, Կեր. Հ. Համգ. Ոսկեան կարճ յոգուած մը ունի, «Օգոստոս ամսուան 8-րդը մեռած է Յակոբ Դ. Զուղայեցի կաթողիկոսը» վերնագրով։ Այդ յոգուածին մէջ սպրդած է կարեւոր սխալ մը զոր հարկ կը սեպենք մատնանշել։

Նախ մէջ բերենք ակնարկուած հաւուածը։

«... Իսկ յաւերն կիւրակէի թէ որքան դառնութիւն հասուցին յայնմ հիւանդութեան չարաճճիկք ոմանք (հաւատոյ դաւա. նութեան խնդիրը կ'ակնարկուի) ... Բայց յերկրորդում աւուր Օգոստոսի ամսոյ յերկուշաբթի յերկու ժամու աւանդեաց զքաղցր հոգին առ Տէր ... (Պողոսեան Ն. Եպ. Մայր Յուլ. Զեռագրաց Ս. Յակոբեանց, Բ., Երուսաղէմ, 1953, էջ 163)։ Արդ, այս Դիրին համաձայն Յակոբ Զուղայեցի մինչև Յուլիս 27(*) Հինգշաբթի, Իսկիւտար է, բայց նախորդ օրը Զորեք շաբթի ծանրապէս կը հիւանդանայ և ծա.

(*) Պէտք էր ըլլար 29։

արժանի։ Անժխտելի է և այն, որ 12րդ դարի հայ եկեղեցական երաժշտութեան մէջ Տարօնեցին, որպէս ուրոյն և ինքնատիպ ստեղծագործող, որպէս եկեղեցական երգերի յօրինող և ձեւակերպող, գրաւում է խոշորագոյն ու պատուաւոր տեղ։ Նրա բարձր ստեղծագործական տաղանդի մի նմուշն է պատարագի զգեստաւորման, պատարագամուտին, երգուող «Խորհուրդ խորին, անհաս, անսկիզբն» շարականը, որ հոգեւոր երգերի մէջ համարուած է ընտիր մի շարական։

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շարունակելի՝ 6)